ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԴԱՆԱՅԻ 1317 Թ. ԺՈՂՈՎԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

1307 թ. Սսի ժողովից հետո Կիլիկյան Հայաստանի հասարակական – քաղաքական կյանքում լարված իրավիճակ էր ստեղծվել, քանզի եկեղեցիների միավորման կողմնակիցները ձեռնամուխ են լինում հայոց եկեղեցական միջավայրի վերակառուցմանը: Ժողովի որոշումների կենսագործումը բարդ խնդիր էր, քանզի հասարակությունը բաղկացած լինելով տարաբնույթ շերտերից տարբեր կերպ էր ընկալում ու կողմնորոշվում: Չպետք է աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ հասարակական – քաղաքական կյանքը առանձնանում էր երկակի կառուցվածքով, մասնավորապես խոսքը վերաբերում է աշխարհիկ և հոգևոր միջավայրերին, որոնք ոչ միայն խոչընդոտում, այլ ձևավորում էին հակադիր կողմնորոշումներ. «Ի ՉԾԸ. թվին ժողովեցան ի մայրաքաղաքն Սիս բազմութիւն աբեղայից և կրօնաւորաց. և սարկաւագաց որք բնակեալ էին ի վանք և յանապատս ծերք և տղայք, այլև վարդապետք և եպիսկոպոսք, և բազմութիւնք ժողովրդոց արանց և կանանց վասն ոչ առնելոյ յանձն արկանել ջուր ի սուրբ խորհուրդն. և վասն այլ ևս նորածև օրինացն...»[1]:

Օշին թագավորը (1308-1320) և Կոստանդին Գ Կեսարացի կաթողիկոսը (1307-1322) շարունակում էին եկեղեցիների միավորման քաղաքականությունը, ուստի 1309 թ. նոր ժողով են հրավիրում, որտեղ քննարկվում են հայոց եկեղեցու դավանաբանության և կազմակերպման հետ աղերսվող խնդիրներ: Եկեղեցիների համընդհանրականության կողմնակիցները իրենց ծրագրի կենսագործման ճանապարհին հանդիպելով լուրջ դիմադրության օգտագործում էին բոլոր միջոցները այն հաղթահարելու համար. «Եւ զաւրաւք ընբռնեաց զորս և պատահեաց, և զյոլովս եսպան, և զայլս ետ կախել ի դրունս քաղաքաց և ի ճանապարհս ի մէջ դաշտաց: Եւ զոմանս ի ձիս ամեհիս, որ անկիրթ էին սանձուոց, յագինս ետ կապել և ընդ դաշտս և ընդ լերինս ցիր և ցան զսուրբ մարմինսն մաշեցին: Եւ կրաւնաւոր քահանայք ճ. [100] ի նաւ ետ արկանել և ծովասոյզ կամէր առնել, զոր աստուած խափանեաց: Բայց առաքեաց զնոսա յաքսորս ի դառն և յերկաթի հնոցն ի Կիպրոս կղզին, ուր ոչ

[1] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 156:

ողորմութիւն և ոչ հանգիստ գտին, և ոչ քայլ մի ոտին...»[2]: Պատահական չէ, որ հակաընդհանրական շարժման առաջատարը վանականությունն էր, քանզի այն Աստծուն ծառայող ամենակազմակերպված ուժն էր:

Այժմ փորձենք պարզաբանել ժողովի հետ աղերսվող մի շարք հիմնախնդիրներ:

Նախ աղբյուրներում պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ ավանդականության կողմնակիցները ժողով են հրավիրել և մերժել դավանաբանական նորաձևությունները[3]:

բ) Օշին թագավորը և Կոստանդին կաթողիկոսը հրավիրելով Ադանայի ժողովը աշխատում էին ցույց տալ, որ Կիլիկիան Հայաստանի եկեղեցաքաղաքական շրջանակների մի մասը հաստատակամ է վերակառուցել հայոց եկեղեցու դավանաբանական և կազմակերպման միջավայրը:

գ) Ժողովի հրավիրման պատճառներից մեկն էլ Սսի ժողովի շուրջ բորբոքված տարաբնույթ վեճերի դադարեցումն էր[4]:

դ) Ադանայի ժողովի հրավիրման պատճառների շարքում պակաս կարևոր դեր չխաղաց պապականության վարած քաղաքականությունը. «Եւ ի քարոզողացս այսոցիկ առաքեցան ոմանք ի գերագոյն պապէն Յոհաննու ԻԲ. որոդէ հանդերձ հայրապետական թղթով առ տէր Կոստանդին Կեսարացի կաթողիկոսն և առ Օշին արքայն Հայոց: Վասն որոյ նոյն կաթողիկոսն գումարելով զամենայն եպիսկոպոսունս և զեկեղեցականս, որք էին բռամբ իւրով, ի միասին ընդ նմին Օշին արքային Հայոց և իշխանաց թագաւորութեան իւրոյ արար ժողով...»[5]:

Պատահական չէ, որ ժողովը հրավիրվեց Ադանա քաղաքում, քանզի նախորդ շրջանում մայրաքաղաքում տեղի ունեցող իրադարձությունները ստիպել էին թագավորին և կաթողիկոսին փոխելու ժողովի վայրը:

Ժողովի հրավիրման ժամանակի հարցը վեճերի և տարակարծությունների տեղիք է տվել: Պատմագիտական գրականության մէջ ժողովը թվագրված է. 1314 թ.[6], 1316 թ.[7], 1317 թ.[8] և 1320 թ.[9]: Այն, որ ժողովը 1317 թ. հետո չէր

---

[2] է. Բաղդասարյան, Գևորգ Սկևռացու վարքը. «Բանբեր Մատենադարանի», N 7, Երևան, 1964, էջ 431-432:

[3] Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր, N 9748, 138-139:

[4] Մամ, ձեռագիր, N 2037, էջ 151[ա]- 151[բ]:

[5] Կղ. Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, հ. I, Հռոմ, 1650, էջ 517:

[6] Recueil des Historiens des groisades. Documents Armeniens, t. I, Paris, 1869, p. LXX

[7] Tournebize F. Histoire politique et religieuse de L'Armenie, Paris, 1900, p. 311.

[8] Տիրայր վարդապետ (Անապատական), Համառոտ պատմութիւն հայ-լատինական յարաբերութեանց սկիզբէն մինչեւ 1382, Անթիլիաս – Լիբանան, 1973, էջ 178:

[9] I. D. Mansi. Sacrorum conciliorum nova et amplissima collectio, vol. 25, Graz-Austria, 1961, p. 655-656.

կարող տեղի ունենալ պարզ է թեկուզ այն հանգամանքից, որ մասնակիցներից մեկը՝ արքեպիսկոպոս Ալինախը մահացել է 1317 թ. օգոստոսի 24-ին[10]: Ադանայի ժողովի ճիշտ թվականը տրված է N 9748 գրչագրում. «...յամի տեառն *ռ.յ.Ժ.է. ին* և *ի* թվականութեան հայոց *ջ. կ. զ. ին*...»[11]:

Այժմ անդրադառնանք մասնակիցների խնդրին, քանզի ի տարբերություն Սսի ժողովի, որի արձանագրությունը պահպանել է մասնակիցների և ստորագրողների ցանկերը Ադանայի ժողովի Սահմանադրությունը ներկայացնում է միայն մասնակիցներին, իսկ Կղ. Գալանոսը թվարկում է ստորագրողներից երկուսին. «Կոստանդին կաթուղիկոս ամենայն Հայոց՝ կամեցայ և գրեցի: Յոհաննէս արհեպիսկոպոս Տարսոնոյ և այլք»[12]:

Ադանայի ժողովին մասնակցել են. «Կոստանդին կաթողիկոս ամենայն հայոց

Յոհաննէս արքեպիսկոպոս Տարսոնի
Կոստանդին արքեպիսկոպոս Սիսոյ
Յոհաննէս արքեպիսկոպոս Տարունոյ և նախաթոռ Հայոց
Ստեփաննոս եպիսկոպոս Ատանոյ
Յոհաննէս եպիսկոպոս Անարզաբոյ
Յոհաննէս եպիսկոպոս Մամուեստոյ
Ներսէս եպիսկոպոս Մօլեսոնի
Ստեփաննոս եպիսկոպոս Բարձրբերդոյ
Յակոբ եպիսկոպոս Կապնոյ
Գրիգոր եպիսկոպոս Մարաշայ
Աւետիք եպիսկոպոս Նփրկերտայ
Կոստանդին եպիսկոպոս Անգուրիայ
Մարկոս եպիսկոպոս Կարուց
Ստեփաննոս եպիսկոպոս Կողոնիոյ
Յակոբ եպիսկոպոս Սալմաստայ
Կոստանդին եպիսկոպոս Մարանդունեցն
Ստեփաննոս եպիսկոպոս դրան կաթողիկոսարանին
Յոհաննէս վարդապետն
Կիրակոս վարդապետն Անապատաւոր
Գրիգոր վարդապետն Գերմաղբիւրոյ
Գրիգորէս վարդապետն
Մարկոս վարդապետն
Հայրն Թիւրքքին Հայրապետն
Հայրն Խորենին Բարսեղ

Բարեպաշտ թագաւորն Օշին
Եւ արքայեղբայրն և մեծ թագայդիրն Հայոց Ալինախն տերն Տարսոնի և Լամբրոնի

---

[10] Ղ.Ալիշան, Սիսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 271:
[11] Մամ, ձեռագիր, N 9748, էջ 137:
[12] Կղ. Գալանոս, էջ 506:

Պարոն Սմբատ մարաջախտ տերն Ասկուռոյ
Եւ մեծ սպարապետն պարոն Հեթում
Պարոն Ռէմունդն սենէսջալն տերն Միքայելկուին
Պարոն Օշին տերն Կոռիկոսոյ
Պարոն Սմբատ տերն Սմպատայկլային
Պարոն Օշին տերն Կոպիտառու

Պարոն Թորոս պռոկսիմոս տերն Ջոֆրեկլային և այլոս իշխանք և ազատորդիք Հայոց: էր և աւագէրեց թագաւորին Թորոս և այլոս բազմութիւնք քահանայիցն և կրօնաւորաց»[13]:

Այժմ անդրադառնանք դասաշարի հետ կապված մի կնճռոտ հիմնախնդրի լուսաբանման: Հովհ. Քռնեցու «Շրջաբերական թղթում» և N 9748 գրչագրում պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ ժողովին մասնակցել են նաև Զաքարիա արքեպիսկոպոս Ծործորեցին և Հովհ. վարդապետ Ծործորեցին,[14] որոնցից առաջինի անունը արձանագրության մեջ բացակայում է, իսկ հիշատակվող «Յոհաննէս վարդապետն» հազիվ թե Ծործորեցին լինի, ինչպես ենթադրում է Մ. Չամչյանը[15]:

Ինչ հնարավոր եզրակացություններ կարելի է անել այս հակասությունը լուծելու համար.

ա) Կաթոլիկ եկեղեցու հետ միաբանության կողմնակից Հովհ. Քռնեցին այս անունները շրջանառության մեջ գիտակցաբար է դրել, որպեսզի ցույց տա Արտազի թեմի ակտիվ մասնակցությունը եկեղեցիների միավորման գործընթացին:

բ) Զաքարիա և Հովհ. Ծործորեցիների անունների հիշատակումը կապված է ոչ միայն Արտազի թեմի բարձր դիրքի հետ, այլև երկու գործիչներն էլ միության կողմնակիցներ էին, ուստի փորձ էր արվում նրանց գործունեության համար օրինականություն ապահովել:

գ) Երկու հեղինակներն էլ չտալով ժողովի մասնակիցների ցանկը, սակայն նշելով կաթողիկոսի և Ծործորեցիների անունները աշխատում էին բարձրացնել ժողովի հեղինակությունը:

Ադանայի ժողովի տեքստերի վերլուծությունը թույլ է տալիս մտածելու Սահմանադրության մի քանի խմբագրությունների մասին, որոնց բնույթը կախված է եղել կիրառման գործառույթից, քանզի խոսքը վերաբերում էր եկեղեցիների համընդհանրականությանը[16]:

---

[13] Մամ, ձեռագիր, N 2037, էջ 151[բ] - 152[ա].
[14] Կղ. Գալանոս, էջ 517-518: Մամ, ձեռագիր, N 9748, էջ 138:
[15] Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 314:
[16] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 66:

ա) A խմբագրության (ձեռագիր N 9622, էջ 126-130) տեքստը կազմվել է պապականության հետ դիվանագիտական հարաբերություններում օգտագործելու համար, քանզի այստեղ խոսքը գնում է հայ – հռոմեական եկեղեցիների միավորման մասին: Այս խմբագրության է պատկանում նաև N 9748 գրչագրի համապատասխան հատվածը (էջ 138-143):

բ) B խմբագրությունը (ձեռագիր, N 2037, էջ 141բ - 152բ) կազմվել է արքունական դիվանի համար: Եղել են նաև այլ խմբագրություններ, որոնք օգտագործել են հունական և ներեկեղեցական հարաբերություններում:

Այժմ քննարկենք աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների հետ կապված խնդիրները: Այն հանգամանքը, որ ժողովին մասնակցել են նաև աշխարհիկ իշխանության ներկայացուցիչները խոսում է այն մասին, որ Սահմանադրության ընդունումը դիտվել է որպես հասարակական գործ: Հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է ընդուներ կանոնների ճշմարտությունը որպես համընդհանուր շահերից բխող պարտավորություն:

Հեթում Բ թագավորի օժանդակությամբ կաթողիկոս օծված Կոստանդին Կեսարացին, որը գլխավորում էր ժողովի հոգևոր միջավայրը սկսում է ակտիվ համագործակցել Օշին թագավորի հետ,[17] սակայն հայոց կաթողիկոսությունը ուներ որոշակի հետաքրքրություններ, որոնք չէին համընկնում աշխարհիկ իշխանության նպատակների հետ, քանզի.

ա) Կիլիկյան Հայաստանից բացի հայոց եկեղեցու առկայությունը Հայաստանում և գաղթօջախներում իր կնիքն էր դնում կաթողիկոսության քաղաքականության վրա, քանզի նա հանդես էր գալիս «կաթողիկոս ամենայն հայոց» տիտղոսով:

բ) Սովորաբար աշխարհիկ և հոգևոր խշխանություններին միշտ չէ որ հաջողվում էր միասնականացնել եկեղեցաքաղաքական հետաքրքրությունները և շահերը:

Օշին թագավորը հենվելով թագավորական իշխանության կողմից եկեղեցական օրենսդրության բնագավառում յուրացրած իրավունքների վրա աշխատում էր համակարգել աշխարհիկ և հոգևոր իշխանությունների քաղաքականությունը. «Զոր լուեալ քրիստոսասէր և բարէպաշտ թագաւորն մեր Օշին և առաքեալ ծանուցէ սրբազան կաթողիկոսին տեառն Կոստանդեայ և նոյն ժամայն հրաման ժողովոյ հանեալ ընդ յամենայն տեղիս տերութեան իւրոյ զի ուր իցէն եպիսկոպոսք և վարդապետք և հարք ի մի վայր եկեալ հոգասցեն յաղագս ճշտութեան...»[18]:

---

[17] Նույն տեղում, էջ 63:
[18] Սամ, ձեռագիր, N 2037, էջ 151բ:

Օշին թագավորի և Կոստանդին Կեսարացի կաթողիկոսի վարած քաղաքականությունը նպատակ ուներ հայոց եկեղեցում կատարել կառուցվածքային փոփոխություններ: Խոսքը, մասնավորապես վերաբերում է Տարոնի թեմին. «Յոհաննէս արքեպիսկոպոս Տարունոյ և նախաթոռ Հայոց»: Տարոնի աթոռի նկատմամբ նման վերաբերմունքը պատահական չէ: Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայոց եկեղեցական կյանքում առավել աչքի էին ընկնում Աղվանքի, Աղթամարի, Արտազի և Սյունիքի աթոռները, որոնցից առաջին երկուսը ներկայանում էին «կաթողիկոս հայոց» և «Արևելեան կաթողիկոս հայոց»: Հավանաբար այս իրողությունը նկատի ուներ Հովհ. Երզնկացին (Ծործորեցին), երբ արձանագրել է. «...ընդէ՞ր ազգս հայոց երիս մասունս բաժանեալ է...»[19]: Քննարկվող ժամանակաշրջանում վերոհիշյալ երկու աթոռները կանոնական հարաբերություններ չունեին Սսի հայոց կաթողիկոսության հետ: Այս ճանապարհով փորձ էր արվում թուլացնել նաև Սյունյաց և նրա շուրջ համախմբված աթոռների ազդեցությունը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական միտքը հուզող և Աղանայի ժողովում արծարծվող խնդիրների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար փորձենք պարզաբանել այն հարաբերությունները, որոնք ստեղծվել էին հայոց եկեղեցու ներսում դավանաբանական նորածևությունների շուրջ: Աղանայի ժողովին նախորդած շրջանում և հետո ակտիվ բանակցություններ էին տեղի ունենում կաթողիկոսի և նշանավոր թեմերի առաջնորդների միջև, որից պարզ է դառնում խնդիրների այն շրջանակը, որը դրված էր փոխհարաբերությունների հիմքում: Այսպես, Սյունյաց աթոռի կաթողիկոսին ուղարկված պատասխան թղթում ասված է. «Որ և եկեալ նուիրակդ ի Ձենք Գրիգոր կարճ և համառօտ բանիւ զպատասխանի մեզ ետ այսպիսի օրինակաւ, թէ. «Հոգևոր Տեառնն հրամանք է, թէ որ ոք յանձն առնու զջրով պատարագելն, և ի դեկտեմբերի *իե* զծննդեան տօնն կատարել, այնոցիկ մեռոն տուր և օրհնէ. և որ ոչ կամիցին ի սուրբ խորհուրդն զջուրն խառնել, և ի դեկտեմբերի *իե* ծննունդն առնել, այնպիսեացն մեռոն մի տուր, և մի օրհներ զայնոսիկ...»[20]:

Վերոբերյալից հետաքրքիր է երկու հարց.

ա) Կաթողիկոսը պահանջում էր իրագործել երկու կանոն այն դեպքում, երբ շրջանառության մեջ էր ավելի շատ կետեր:

---

[19] Մամ. ձեռագիր, N 3522, էջ 172[բ]:

[20] Նամակ Յովհաննու Օրպէլի եւ այլոց եպիսկոպոսաց եւ վարդապետաց Սիւնեաց ի պատասխանի թղթոյ Կոստանդնի Բ կաթողիկոսի Հայոց, «Ճռաքաղ», հ. II, 1860, Սոսքուա, էջ 43:

բ) Հայոց կաթողիկոսը աշխատում էր ներկայանալ որպես հայոց եկեղեցու օրենսդրության աղբյուր. «Հոգևոր Տեառնն հրամանք է», սակայն թեմերի մի մասում նկատվում էր հակադարձ դրսևորումներ[21]: Այժմ ներկայացնենք դավանաբանական այն կանոնները, որոնց ընդունումը Ադանայի ժողովը անհրաժեշտ էր համարում. «Սակս որոյ գրեալ ծեռօքն իւրօվք կանոնս և սահմանս մերոյս եկեղեցւոյ յորում եւ հրամայեաց խառնել ի ջուրի բաժակին որպէս և այլ քրիստոնեայք հառնեն և զտօն Աւետեացն ըստ խորհրդեան ի մարտի *իե* առնել և զծնընդեանն դեկտեմբերի *իե* իսկ զմկրտութիւն ի *զ* յունվարի: Եւ զի զաւանդութեամբք տօնքն զոր ունէր եկեղեցիս Հայոց այնպէս կալցի և տօնեսցէ: Եւ զտօնս սրբոցն սահմանեաց ըստ տեառն ընդ առաջին ի փետրվար *բ* կատարել: Եւ զփոխումն Տիրայմօրն յօգոստոս *ժե* առնել և զխաչավերացին տօնն սեպտեմբերի *ժզ* առնել:

Կանոնեաց եւ *զբ* բնութիւն ի միանձնաւորութիւն Քրիստոսի յաղագս անշփոթ միաւորութեանն ասել որպէս և ուսի ուղղափառացն եկեղեցի: Եւ զի ի պատարագն գորբորայր լիցի և աստիճանաւորքն կացցեն յեկեղեցի ըստ կարգի և զպահք ճրագայլուցի զատկին, զծնընդեանն և զմկրտութեանն ձկամբ միայն բավականանալ և ձիթով ըստ սովորութեան մեծի եկեղեցոյն Հռոմայ: Եւ զերեք սրբութեանն սահմանեաց ի մարդեղութիւն Քրիստոսի ասել»[22]:

Եթե այս հատվածը համեմատենք Սսի ժողովի ընդունած Սահմանադրության հետ, ապա ակնհայտ է, որ դավանաբանական որոշ կետեր տեղ չեն գտել Ադանայի ժողովի որոշումներում: Սա կարելի է բացատրել, եթե հաշվի առնենք.

ա) ժամանակը պետք է իր կնիքը դներ եկեղեցիների միավորման կողմնակիցների գործունեության վրա և ճշգրտումներ մտցներ նրանց ծրագրում: Այստեղ որոշակի դեր խաղաց նաև հայոց եկեղեցում խմորվող տրամադրությունները:

բ) Օշին թագավորը և Կոստանդին Կեսարացի կաթողիկոսը ներկայանում էին որպես Սսի ժողովի որոշումների, որն այս դեպքում հանդես էր գալիս որպես նրանց գործունեության ուղենիշ, այլ ոչ թե անհրաժեշտ պայման, կրողներ:

Դավանաբանական խնդիրներից բացի Ադանայի ժողովը քննարկեց նաև հայոց եկեղեցու կազմակերպման հարցը. «...եւ զայսպիսի բաժանումն մեր որ ի կաթուղիկէ եկեղեցոյ փութացան բժշչկել միացուցանելով դարձեալ զմեզ ի մի կաթուղիկէ եկեղեցի սուրբ և ի մի մարմին Քրիստոսի...»[23]:

---

[21] Սամ, ձեռագիր, N 3522, էջ 172ա - 172բ:
[22] Սամ, ձեռագիր, N 2037, էջ 150բ 151ա:
[23] Նույն տեղում, էջ 142ա:

Փաստորեն հետաքրքրությունների ընդհանրությամբ հանդերձ հայոց աշխարհիկ և հոգևոր իշխանությունները փորձում էին լուծել նաև տարաբնույթ խնդիրներ: Աշխարհիկ իշխանությունը աշխատում էր լուծել հետևյալ հիմնախնդիրները.

ա) Դավանաբանական և կազմակերպման ընդհանրության հիման վրա Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ իշխանությունը փորձում էր ամրապնդել իր դիրքերը և հեղինակությունը ինչպես երկրի ներսում, այնպես էլ քրիստոնեական աշխարհում:

բ) Այս ծրագիրը նպատակ ուներ լուծել նաև Արևմտյան Եվրոպայից ռազմաքաղաքական օգնություն ստանալու խնդիրը:

Սսի հայոց կաթողիկոսությունը շահագրգռված էր.

ա) Եկեղեցիների միավորման ծրագրի իրագործմամբ փորձում էր հայոց եկեղեցին ներառել տիեզերական եկեղեցու համակարգում, ըստ այդմ էլ պետք է հաղթահարվեր նրա ավանդականությունը և ինքնամփոփությունը:

բ) Պետք է հաղթահարվեր Կիլիկյան Հայաստանում եկեղեցական տարբեր համայնքների միջև առկա կանոնական - դավանաբանական լարվածությունը:

գ) Տարաբնույթ քաղաքական միջավայրերում գտնվող հայոց եկեղեցական թեմերը պետք է կապվեին ընդհանրական եկեղեցու հետ, ըստ այդմ էլ հայոց եկեղեցու համար ստեղծվելու էր գործունեության նոր շրջանակներ:

* * *

ԺԴ դարի սկզբին Կիլիկյան Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակներում լայնորեն քննարկվում էր եկեղեցիների միավորման խնդիրը: Օշին թագավորը (1308-1320) և Կոստանդին Գ Կեսարացի կաթողիկոսը (1307-1322) 1317 թ. Ադանա քաղաքում ժողով են հրավիրում, որտեղ քննարկվում և հաստատվում են այն կանոնները, որոնք պետք է ընդուներ հայոց եկեղեցին: Այս ճանապարհով փորձ էր արվում հայոց եկեղեցին ներառել տիեզերական եկեղեցու համակարգում: